Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Յունիքիմ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ գնման առարկաների բնութագրերից ապրանքային նշանների անվանումները հանել պարտավորեցնելու, իսկ անհնարինության դեպքում «կամ համարժեք» բառերն ավելացնելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

պարտավորեցնել «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ–ին թիվ ՀԲԿԷԱԱՊՁԲ-25/0501 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի թիվ 24–րդ, 25–րդ, 26–րդ և 68–րդ չափաբաժիններով գնման առարկաների բնութագրերից հանել ապրանքային նշանների անվանումները:

Հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Յունիքիմ» ՍՊԸ-ի բռնագանձել 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am